



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1724

171.91

4.61

1886

2010

171.91
U-61

Պ Ա Ր Տ Ք

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

Ս Ա Մ ՈՒ Է Լ Ս Մ Ա Յ Լ Ս Ի

Տ Ե Տ Ր Ա Ռ Ա Ջ Ի Ն

Առաջին և երկրորդ անգամը չէ որ մեր մասնաբաժանող կղզույն պատմութեան մէջ Պարտքի ճանապարհը՝ եղել է ճանապարհ փառքի՝ ՏԵՆՆԵՍՈՆ՝

Պարտքի խիստ հրամանները, Ամենաբարձրէն Նախասահմանութեան բացուած գիրքը, երկնից բարձունքը՝ որոնց որ դուք սաստիկ ձգտում էք դժոխքը՝ որից դուք վախենում էք, այդ ամենն էլ մի փայն ձեր մէջն է։

ՌԵՆԵՏԵՍԵՐ

Թ Ա Ր Գ Մ Ա Ն ՈՒ Թ Ի Ւ Ն

Ն Ի Կ Ո Ղ Ա Յ Ո Ս Բ Ա Հ Ա Ն Ա Յ Ի Բ Օ Մ Ն Ա Կ Ն Ա Ն Յ



ՌՈՍՏՈՎ (ԴՕՆԻ ՎԵՐԱՅ)
ՏԳԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՏԵՐԱՐՐՈՀԱՄԵԱՆ
1886.

9035-222

171.91
U-61

953

57

Պ Ա Ր Տ Ք

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

Ս Ա Մ Ո Ւ Է Լ Ս Մ Ա Յ Լ Ս Ի

100
2572-ՍՍ

ՏԵՏՐ ԱՌԱՋԻՆ.

Առաջին և երկրորդ անգամը չէ որ մեր մա-
տակապատ կղզւոյն պատմութեան մէջ Պարտքի
ճանապարհը՝ եղև է ճանապարհ փառքի :


ՏԵՆՆՍՈՆ.

Պարտքի խիստ հրամանները, Ամենաբարձրե-
լոյն Նախասահմանութեան բացուած դիրքը, երկ-
նից բարձունքը՝ որոնց որ դուք սաստիկ ձգտում
էք. դժոխքը՝ որից դուք վախենում էք, այդ
ամենն էլ փոխան ձեր մէջն է :

ՈՒԷՅՏԷՅԵՐ.

ԹԱՐԿՄԱՆՈՒԹԻՒՆ

Ն Ի Կ Ո Ղ Ա Յ Ո Ս Ք Ա Հ Ա Ն Ա Յ Ի Բ Օ Ս Ն Ա Կ Ե Ա Ն Յ



ՌՈՍՏՈՎ (ԴՕՆԻ ՎԵՐԱԿ)

ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՏԷՐ-ԱՐԻՍՏՈՄԵԱՆ
1886.

008
110-2400

1004
18997

2001



ՄԵՆՍՊԱՏԻԻ

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՐԻՍՊՈՆԵՆՏԻ

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Ա. ԿԱՐԳԻ ՂԱՃԱՌԱԿԱՆ

Ա. ՂԱ ՍԱՐԳՍԻ ՆԻԿՈՂԱՅՈՍԵԱՆ

ՓԻՍՏԵԱՆՑ,

ԵՐԱԽՏԱՊԱՐՏ ՍՐՏԻԻ

ՆՈՒՐՈՒՄԷ

ԹԱՐԳՍԱՆԻՉԸ.

9293P

006
ՍՍ-2429

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 4 апрѣля 1886 г.



ՅԱՌԱԶԱԲԱՆ

ՊԱՐՏՔ ԵՒ ԻՐԱԻՈՒՆՔ ըստած կապակցական գաղափարները ըստ երևոյթին որչափ էլ ամենքին ծանօթ և պարզ են, սակայն շատ սակաւ կը գտնուին այնպիսի մարդիկ, որ գիտեն դոցա բուն էութիւնը և ըստ այնմ կը վարուին: Մեր մէջ ոչ իրաւունքն իբր իրաւունք են ըմբռնում և ոչ պարտքն իբր պարտք: Բայց ասեմք ակելին ևս. իրաւունքի գաղափարը՝ թէ և աղօտ, բայց ակելի տարածուած է մեր մէջ. մեծ ու փոքր, կրթուած ու տղէտ իրաւունք են գոչում, փոխանակ նորա հիմնաքար պարտքի գաղափարը նախապէս ըմբռնելու և այդ իրազործելու համար իրենց վարժելու: Վասն զի այդ երկուսի կատարեալ զուգընթացութիւնն է միայն պատճառ բարեկեցութեան և բարգաւաճման:

Երանի՛ թէ առաջիկայ գրքի ընթերցումն մի նպատտ մատակարէր պարտքի զգացման զարգացմանը, և այդ լիակատար վարձատրութիւն կհամարուի մեր փոքր ի շատէ աշխատանաց, որովհետև այդ իսկ է մեր նպատակը:

Սամուէլ Սմայլսի երկասիրութիւնները յայտնի են որպէս ընտիր աշխատութիւններ: Հայ հասարակութեան ծանօթ են նորա «Ինքնօգնութիւնը» տպ. ի Պօլիս, և «Բնաւորութեան» մի քանի գլուխները՝ տպ. «Արարատ» ամսագրում: Առաջիկայս նորա «Պարտքն» է, որ ծախուց ծանրութեան պատճառաւ առանձին տետրակներով հրատարակելով՝ մեր պատուական ազգայնոց մէկ փոքր ծառայութիւն անելու յուսով տպեցինք:

Ն. ԲԷ. ԲՕՍՆԱԿԵԱՆՑ.

ՆՈՐ ՆԱԻԷԵԻԱՆ.
1 յունվարի 1886 ա. ֆ.

Գարաբի շրջանը:—Պոմպեի մտեղած զինուորը:—Բիրգենսեթ:—
Ամբիկացի օրէնսդիր:—Պարաբի հիմունքը:—Աղատութիւն:—Խիշ:—
Վամբի ոյժ:—Կրօն:—Ինքնիշխողութիւն:—Վառավարութեան լաւագոյն
ձևը:—Պասկալ կեանքի մասին:—Սոկրատի վարդապետութիւնը:—Պը-
ղատոն:—Նոր կտակարան:—Դոկտոր Մէկէտո:—Բնաւորութիւն:

ՐՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Գ Լ Ո Ւ Խ Ա. — Պ Ա Ր Տ Ք Ը Խ Ղ Ճ Մ Տ Ա Ն Ք Ն Է.

Պարաբի շրջանը:—Պոմպեի մտեղած զինուորը:—Բիրգենսեթ:—
Ամբիկացի օրէնսդիր:—Պարաբի հիմունքը:—Աղատութիւն:—Խիշ:—
Վամբի ոյժ:—Կրօն:—Ինքնիշխողութիւն:—Վառավարութեան լաւագոյն
ձևը:—Պասկալ կեանքի մասին:—Սոկրատի վարդապետութիւնը:—Պը-
ղատոն:—Նոր կտակարան:—Դոկտոր Մէկէտո:—Բնաւորութիւն:

Պ Ա Ր Տ Ք Ը Խ Ղ Ճ Մ Տ Ա Ն Ք Ն Է.

Նա գնում էր հօր ուղեկից մարտիկ—խղճմտանքի—
հետ:

ՄԻԼՏՈՆ.

Պարաբը այս յաւիտենական կերոնը, անդադար
վառվումէ քո աչքերի առաջ հանդարտ և հաւասար
լուսով, չկրելով փոփոխութիւն ոչ տիրութեան և ոչ
ուրախութեան օրերում:

ԿԵՆԱՑ ԵՐԳ.

Ո՛վ մարդ, ինչ՞ու ես վատաբանում աշխարհս. աշ-
խարհը գեղեցիկ է, նորան ստեղծած է գերազանց և ամե-
նակատարեալ բանականութիւնը, թէև նա կարող է երեւալ
քեզ գարշելի և չար, սակայն գեղեցիկ աշխարհիս մէջ
գարշելին և չարը դու ինքդ ես: ՄԱՐՏԻԼԻՍ ՖԻՑԻՆ.



Սարգս իւր համար միայն չէ ապրում: Նա
ստեղծուած է ոչ թէ միմիայն իւր օգտի,
այլև մերձաւորի օգտի և բարութեան համար:
Մեզանից իւրաքանչիւրի վերայ դրուած են
պարտաւորութիւններ, ինչպէս առաջին հա-
րուստի, այնպէս էլ ամենայնպէս աղքատի վերայ:
Մի քանիսի համար կեանքը վայելչութիւն է. այլոց՝
տանջանք: Բայց ընտիր մարդոց կեանքի նպատակը՝
ոչ ինքնազուարճութիւնն է և ոչ էլ միւսչև ան-

զամ փառք: Օգտակար գործերի առպարիզում նոցա միակ ամենահզօր շարժիչն արդիւնաւոր և բազմախոստում աշխատանքն է:

Իստ Էրակէսի, մեզանից իւրաքանչիւրը ներկայացնումէ մի կիւրոն՝ շրջապատուած բազմաթիւ համակերոն շրջաններով: Մեր ամենամօտ շրջանը կազմում են մեր ծնողները, կիներ ու երեխաները. հետևեալ համակերոն շրջանը բովանդակում է իւր մէջ մերձաւոր և հեռաւոր ազգականները. երրորդ շրջանը համաքաղաքացիներն են. և վերջապէս չորրորդը՝ նկարագրումէ ինքն ըստ ինքեան մեր պարտաւորութիւններն ընդհանրապէս բոլոր մարդկութեան վերաբերմամբ:

Աստուծու և մարդու նկատմամբ մեր ունեցած պարտականութիւնների հաստատուն և անվրէպ կատարումն, ի հարկէ, կախումն ունի Աստուծոյ մեզ պարզեւած ընդունակութիւնների զարգացումից և անդադար կատարելագործութիւնից: Կա է մեզ պարզեւել ամեն բան: Մեր կամքը կառավարումէ մի բարձր կամք և խելամտացնումէ նորան: Բարու և չարի գիտութիւնը, լաւի և իրաւի, վատի և անիրաւի ճանաչումը մեզ պատասխանատու են անում այստեղ երկրիս վերայ մարդու առաջ և երկնքում—Աստուծոյ:

Պարբի շրջանը սահման չունի: Պարտականութիւնն անբաժան կապուած է կեանքի ամենահարաւոր դրութիւնների հետ: Մարդուց կախուած չէ

հարուստ կամ աղքատ, բաղդաւոր կամ անբաղդ լինելը, բայց նորա սուրբ պարտքն է իւր պարտաւորութիւնները կատարելը, որոնցմով նա շրջապատուած է: Պարտքի զգացման հպատակութիւնն ինչ և լինի, այսպէս ասած, բարձր քաղաքակրթութեան էութիւնն է: Ինչպէս անցեալ ժամանակները, այնպէս էլ ներկայումս պէտք է աշխատել մեծամեծ գործերի անունով, պէտք է ձգտել նորանց հասնելու և հարկ եղած դէպքում ևս հարկաւոր է գիտնալ նորանց համար զոհուիլ: Եւստ անգամ մենք կապում ենք պարտքի գաղափարը՝ զինուորի հաւատարմութեան հետ: Սորանից տասնևութը դար առաջ Պոմպէյ քաղաքի՝ Վեզուվից արտահոսած լաւայով և մոխրով կործանման ժամանակ՝ իւր պաշտօնի մէջ մեռնող պահանջող զինուորի յիշատակը՝ մինչև մեր օրերը պահուեցաւ: Կա իսկական գինուորի ախար էր: Մինչ ուրիշները փրկութիւն փնտռելով՝ փախչում էին քաղաքից, նա հաստատուն մնում էր իւր պաշտօնի մէջ, որ նորա պարտականութիւնն էր: Տեղը պահպանելու համար նորան նշանակել էին պահանջող, բայց նորա մտքիցն անգամ չանցաւ, թէ նա էլ կարող է իւր վերայ դրուած պարտականութիւնները կատարելուց շեղուիլ: Մոխրից գոյացած ամպերի գարշահոտ ծծմբային գոլորշիներից խեղդուելով մեռաւ նա, մարմինը մոխիր դարձաւ, բայց նորա յիշատակը մինչ ցարդ ևս կենդանի է: Կորա սողաւարտը, նիզակն

ու լանջապանակը կարելի է տեսնել և այժմ՝ Վէապօլսի Բուսթանի թանգարանում:

Հնազանդութիւնն ու սահմանուած կանոնների անպայման հպատակութիւնն այս հերոս զինուորի որոշիչ գծերն էին: «Վա կատարեց ճշտիւ այն՝ ինչ որ նորան պատուիրուած էր: Վա վարուիլ ցանկացողը պէտք է ամենից առաջ գիտենայ ծնողներին, դաստիարակչին և իշխանութեան հնազանդիլ: Ամենավաղ մանկութիւնից պէտք է հնազանդութեան ընտելանալ, բայց և վերջին հասակները՝ մեզ հնազանդութիւնից ազատ չեն կացուցանում: Մենք մեր զինանքի մինչև ամենավերջին սահմանը պարտաւոր ենք հնազանդիլ և հպատակիլ: Պարտքը, իւր ամենամաքուր արտայայտութեամբ այնքան աւելի հարկադրական է, որ մարդ կատարելու միջոցին՝ բնաւ երբէք չէ մտածում իւր մասին: Այդ պարտքը միշտ մեր աչքերի առաջն է և մենք պարտական ենք կատարել առանց ամենի ին մտածելու ինքնազոհութեան մասին:

Իայց Պոմպէյ քաղաքի հռովմայեցի զինուորի քաջութեան դարից անցնենք դէպի առաւել մեզ մօտ դարը:—Երբ Աֆրիկէի եզերքներում «Իր. գէնիսէդ» առագաստաւոր նաւը ընկղմվում էր իւր քաջ նաւաստիներով, որ զնալով ալիքների տակ հնչեցուց օղը հրացանութեան հրաժարական ձայնով, և երբ այս նաւակոծութեան լուրը հասաւ Անգղիա, թագաւորական ձեմարանը՝ ի պատիւ

Ուէլլինգտոն դքսին՝ մի մեծ հացկերոյթ տուեց: Մակոլէյը այս առթիւ ասումէ. «Ես նկատեցի (նոյնը նկատեց և ամերիկացի նախարար Մեռ Վաուրէնսը) որ դուքսը իւր գովասանական խօսքերի մէջ ի պատիւ կորսուած խեղճերի, ոչ միանգամ չյիշեց նոցա քաջութիւնը, սակայն շատ խօսեց նորանց օրինակելի հպատակութեան (սահմանեալ կանոնների) և ստորադրութեան մասին: Ինչպէս առաջնոյն, այնպէս էլ երկրորդի մասին նա քանի մի անամ յիշեց. իսկ քաջութեան վերայ, ես կարծեմ զա նայում էր իբրև մի բոլորովին բնական և ամենահասարակ գործի վերայ»:

Պարտքի զգացման հետ պինդ կապուած է անձնուրացութիւնը: Այս հասարակ անվեհերութիւն չէ: Արիւնաժարաւ գազանի հետ առիւծի քաջութեամբ մարտնչող սուսերամարտին զրգում էր անյազ հանդիսատեսների խումբը. բայց և այնպէս նա ամենևին ինքնամոռացութեան չէր հասնում, ինչպէս և Երբէք չէր հեռացնում աչքից իւր ակնկալած պարզեները: Պիզարը, արդարև, անվեհեր մարդ էր. սակայն նորա այդ անվեհերութիւնը պահպանվում էր սաստիկ զօրկանքների և անխոնջ աշխատանքների մէջ՝ նորա շահախնդրութեամբն ու արծաթսիրութեամբը:

«Պամենոմ էք դուք մեծ իննիլ» հարցնումէ Սուրբն Օզոստինոս.— ուրեմն առաջ փոքր եղէք: Պամենոմ էք դուք կառուցանել լայնատարած և

բարձր շէնք. — ամենից առաջ հոգացէք հիմքի ամբողջեան մասին: Որչափ բարձր պիտի լինի ձեր շինուածքը, այնքան էլ խորը պէտք է դնել նորահիմքը: (Համեստ խոնարհութիւնը գեղեցկութեան պատկն է:)

Պարտականութիւնների ամենալաւ տեսակը կատարվում է ծածկաբար՝ հետու մարդկանց աչքերից: Այստեղ մարդ իւր գործը կատարում է պատուաւոր և անձնա՛ուէր կերպով: Նա չէ հետևում աշխարհային անարգ բարոյականութեան: Նա ինքն իրան ցոյց չէ տալիս: Այդպիսին կարելի է կարծել, որ աւելի ընդարձակ հասկացողութիւն և աւելի բարձր բարոյականութեան սկզբունքներ ունի, որոնց հնազանդութիւնը իւրաքանչիւր մարդկային կեանքի և կենցաղավարութեան մէջ, մենք տեսնում ենք իբրև մի յաւիտենական պարտականութիւն ընդհանուր մարդկութեան վերաբերմամբ: Մեր վատ կամ անխոհեմ վարմունքները ամենայն օր ձգում են մեզ պարտքի մէջ, որը վաղ կամ ուշ պէտք է մարդկութիւնը վճարէ:

Իայց ի՞նչպէս պէտք է սովորել պարտականութիւններ կատարել. միթէ այդ շատ դժուարի՞ն է: Նախ և առաջ հանդէս է գալիս միշտ մարդու յատուկ առ Աստուած ունեցած պարտքի զգացումը: Յետոյ գալիս են միւս պարտականութիւնները. — Պարտք ընտանիքի և մերձաւորի նկատմամբ, տէրերի պարտքը ծառաների և ծառաներինը տէրերի վերա-

*Ա. այնպէս
Բ. շինելի
որպէս և այլն*

բերմամբ, պարտք քաղաքացիներին՝ պարտաւորութիւններ կառավարութեան վերաբերմամբ, որը իւր կողմիցն էլ ունի իւր պարտականութիւնները քաղաքացիների նկատմամբ:

Այս պարտականութիւնների մեծ մասը մարդկանց աչքերի առաջ չէ կատարվում: Մեր գործողութեան եղանակը, իբրև հասարակական գործողի, կարող է ամենին յայտնի լինել, քայց մասնաւոր կեանքում արտայայտվում է մարդուս այն ներքին և հոգեկան կեանքը, որ ոչ ոք չէ տեսնում:

Մեզանից իւրաքանչիւրի ընտրութեանն է ձրգուած, արժանաւոր կամ անարժան լինել: Ոչ ոքի դուռը չէ մեր հոգին կորսնցնելու կարողութիւն, բայց կարող է կորսուել միմիայն ինքնասպանութեամբ: Եթէ մենք գնում ենք այն ճանապարհով, որով մենք մեզ և ընկեր ընկերի կատարելագործում ենք, եթէ մենք կարողացել ենք մեզ և ուրիշներին փոքր ի շատէ դարձնել դէպի աւելի լաւը, մաքուրը և ազնիւը, սորանով մենք թերևս մեր կարողութիւնից առաւել շատ ենք արել:

Ահա մի ամերիկացի օրէնսդրի վերայ նկատում ենք այն բանի օրինակը թէ՛ ի՞նչպէս պէտք է մարդ վերաբերուի իրան յանձնուած պաշտօնին:

Մտ հարիւր տարի առաջ Նոր Անգղիայում արեգական խաւարում եղաւ: Մութը կոխեց և շատերին երևում էր, որ ահեղ դատաստանի օրը մօտեցել է:

Այդ միջոցին նիստ կար Վոննեգթիզութի օրէնսդրական պալատում: Մութը կոխելիս, անդամներից մէկն առաջարկեց, որ նիստը յետաձգուի. բայց այդպիսի առաջարկութեան դիմաց Ստամֆորթցի Վէլենփորտ անունով մի ծերունի Պիլ-րիւտան *) ելաւ և յայտնեց, որ եթէ իրօք պիտի ժամանէ անհնազանդութեան օրը, նա կցանկանար որ այդ օրը՝ իւր պարտականութիւնը կատարելիս գտնէր նորան. և առաջարկեց որ ճրագ բերեն, որպէս զի պալատը (օրէնսդրական ժողովը) կարողանար շարունակել իւր գործը:

Այս պատուաւոր քաղաքացու առաջնորդող կանոնն էր, երբէք որ և իցէ հանգամանքում չչեղուիլ իւր պարտքից: Նորա կարծիքը բարձր համարուեցաւ և առաջարկութիւնն ընդունուեցաւ:

Մի շատ վատառողջ մարդ իւր ժամանակի մեծ մասը նուիրած էր բարեգործութեան: Աս յաճախ այցելում էր հիւանդներին, շատ անգամ երկար ժամանակներով նստում էր նոցա հետ. նոցա խեղճ ցաւալի դրութեան մէջ խնամում էր նոցա. մի խօսքով նա ամեն կերպ աշխատում էր օգնել և թեթեւացնել խեղճերի դառն վիճակը: Այս առթիւ քանի մի անգամ իւր ընկերները նկատողութիւն արին նորան և մինչև անգամ յանդիմանեցին, որ նա խեղճերի համար ոչ միայն իւր գործերը

*) Պարզակրօն (աղանդաւոր Անգլիայում). Թարգմ.

թողնումէ, այլ և ամենայն օր ենթարկվումէ տարափոխիկ վտանգներին՝ այցելելով վարցանքաւորներին և մեռնողներին: Սակայն նա այս նկատողութեանց դէմ՝ իւր բարեկամներին պատասխանեց հանգիստ և հաստատ կերպով. «Այս իմ անձնական գործերով պարագում եմ իմ կնոջ և երեխայոցս համար, բայց ես այն կարծիքն եմ ունեմ, որ մարդուս դէպի հասարակութիւնն ունեցած պարտքը, պահանջում է նորանէց, որպէս զի նա հոգայ ոչ միայն իւր ընտանեաց, այլ և նոցա՝ որոնք նորա ընտանեաց անդամ չեն»: Այդ՝ պարտքի յօժարակամ և անձնատուր ծառայի խօսքերն էին: Մարդկային ազգի խսկական և լաւագոյն բարեբարը նա չէ, որ զօհումէ իւր փողերը յօգուտ մերձաւորի, այլ նա՝ որ ինքզինքը տալիս է չունեւորների ծառայութեան:

Չունեւորներին իւր փողերը տուողը շահում է անուն և պատիւ, իսկ իւր ժամանակը, առողջութիւնն ու հոգին պարգևողը, ստանում է նոցա սէրը:)

Առաջինի յիշատակը կարելի է որ պահպանուի, մինչդեռ երկրորդինը կարող են մոռանալ, թէպէտև նորա սերմանած բարի սերմերը երբէք չեն մեռնում:

Իայց ինչո՞ւմն է պարունակվում պարտքի հիմքը. Ժիւլ Սիմօնը գրեց յարգելի «Պարտք» անուանեալ գիրքը, յորում ապացուցանումէ որ պարտքը՝ ուղղակի ազատութիւնից կախումն ունի: Մարդը պէտք է ազատ լինի ինչպէս իւր հասարակական պարտաւորութիւնքը կատարելու համար, այնպէս էլ անհա-

Յիշում

տական բնաւորութիւնը ձեւակերպելու: Մտքի ազատութեան հետ պէտք է միանայ և գործողութեանց ազատութիւնը: Բայց սորա հետ միասին հարկ չէ մոռանալ, որ ազատութիւնը կարելի է դէպի չարը գործածել. կարելի է նորանով գործել ոչ այնքան բարութիւն, որքան չարութիւն: Խմբի բնաւորութիւնն առաւել վատ է քան թէ մի մասնաւոր անձինը: Ամերիկացի Տորօն ասումէ որ նորագոյն ազատամտութիւնը ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ՝ աւատական (ֆէօտալական) ստրկութեան կարծիքականի փոխուիլը:

Ազատութիւնն՝ ինչպէս ամենուն և իւրաքանչիւրի ընդհանուր ստացուածք, հասկացվումէ միայն նորագոյն ժամանակների պատմութեանը *): Հին ժամանակներում ազատ կոչուած մարդկանց իրաւունք արուած էր իշխել ստրուկների վերայ: Մտրուկութիւն էր թէ՛ թագաւորութեան մէջ և թէ՛ ընտանեաց: Մտրուկութիւն թէ՛ հասարակապետական կառավարութեան ժամանակ և թէ՛ միապետութեան:

*) Այն դադարը թէ աշխատանքը մի անարգ բան է, հեթանոսական և աւատական ժամանակների մնացորդ է, երբ արօրը յանձնուած էր բացառապէս ստրուկներին և միայն դիւղացին մշակում էր երկիրը: Հռովմայեցիներին այսպէս որոշում էին ազնուականութիւնը. gentem habent soli cuius parentes nemini seruiert, այսինքն, «միմիայն նորա են ազնուականներ, որոնց նախնիքը ոչուրի չեն ծառայած»: Հիւսիսային Ամերիկայի հասարակապետութեան մէջ տիրապետող այն հասկացողութիւնը, թէ մինչև անգամ ամենահեռուոր նախնեաց ստրկական արիւնը արատաւորումէ մարդուն, — իսկ և իսկ Հռովմայեցիներից ծագած է: Սիրելի Գերմանացի գեղջուկներ, — ասումէ Հէյնէն, — գնացէք դէպի Ամերիկա, դուք այնտեղ չէք գտնի ոչ արքայա-

18681

Պատոն երէցը՝ Հռովմայ հասարակապետութեան ամենամեծ տնտեսը, ապացուցանումէր թէ զառամեալ ստրուկներին պահպանելու անհրաժեշտութիւնից ազատելու համար՝ նպատակայարմար է ջրնջել նոցա: Հիւանդ և աշխատանքի անընդունակ ստրուկները ուղարկվում էին Տիբերիս գետի վերայ զտնուած կղզին, ուր և մեռնում էին կամ հիւանդութիւնից կամ քաղցածութիւնից: Հռովմում կայսերութեան ժամանակները՝ հռովմայեցոց ժողովուրդը ապրում էր հասարակային բարեգործական սուրբերով: Նոյնպէս և Անգղիայում, երբ ստրկութիւնը ոչնչացրած էր և աղքատները այլ ևս չէին նպաստվում վանքական սուրբերից, աղքատների համար նոր օրէնք հրատարակուեցաւ, որ խկապէս կորսուած ազատութեան փոխարէն մի տեսակ վարձատրութիւն էր:

Ազատութիւն բառից առաւել մի ծանրակշիռ և վսեմ բառ կայ, այսինքն, խղճմանք բառը:

զուններ, ու մեծամեծներ, այնտեղ ամենը հաւասար են, բացի, ճշմարիտ, այն մի քանի միլիոն սևամորթ կամ շագանակագոյն անբաղդներից, որոնց հետ վարվում են, ինչպէս շների հետ, նոցա սևամորթ լինելու պատճառաւ: Եթէ մէկը ունենար Նիկրեան ցեղի թէև ամենափոքրագոյն նշանները և թէ նորա ծագումն իրեն մորթի գոյնից յայտնի չլինէր, այլ դէմքի գծագրութիւնից, նա կբաշէր մեծամեծ անարգութիւններ:

Կարծիք չկայ, որ այնտեղ ոչ մի ազնու սիրտ լռելեայն լալիս չլինի ընդհանուրի ինքնասիրութեան և անիրաւութեան վերայ: Բայց և այնպէս եթէ նա յայտնի կերպով պատերազմի այս նախապաշարմունքի դէմ, նորան սպասումէ այնպիսի նահատակութիւն, որի մասին Եւրոպայում հազիւ կարող ենք մենք հասկացողութիւն ունենալ:



Այդ խօսքի զօրութիւնը բաղաբաղութեան սկզբնաւորութեան հետը միասին ընդունուած էր: Յունաց Մենանդր բանաստեղծը Վ. Մ. երեքհարիւր տարի առաջ, լիովին ճանաչում էր խղճմտանքի բարձր նշանակութիւնը: «Մեր իսկ կուրծքի մէջ, ասում են, մենք կրում ենք Աստուծուն, այսինքն՝ մեր խղճմտանքը»: Մի ուրիշ տեղ էլ ասում է. «Միմիայն իրան համար ապրելն՝ ապրել է նշանակում: Ամեն անգամ, երբ դուք կատարում էք մի որ և իցէ լաւ, բարի գործ, ուրախ և զուարթ եղէք, որովհետեւ դուք պարտական էք գիտնալ, որ Աստուած ինքը մասնակից է լինում ամեն արդար և արի վարմունքներում: Ահա մարդուս համար ամենապսեմ և ամենակարեւոր բանը, այսինքն սիրայիր սիրտը»: Հոգեկան առաձին ընդունակութիւնը, որ է խղճը՝ կարելի էր կրօնական բնագոյում անուանել: «Աս մեզանում յայտնվում է առաջին անգամ նոյն իսկ այն վայրկենից, երբ մենք զգում ենք մեր ներսում բարձր և ցած բնութեան մէջ մրցողութիւն, — մրցողութիւն հոգու և մարմնի մէջ. բարու մրցումն չարութեան վերայ յաղթանակելու: Ուր որ կամենում էք՝ նայեցէք, — թէ՛ եկեղեցի եղած տեղում և թէ՛ չեղած, և դուք կտեսնէք, որ ամեն տեղ և անդադար շարունակվում է միևնոյն մրցողութիւնը - այսինքն, մրցողութիւն ապրելու կամ մեռնելու: Վուր կտեսնէք տղամարդիկ և կանայք չարչարուած և հոգեպէս տանջուած միմիայն նորա

համար, որ նորա սիրելով բարին, չեն կարող միևնոյն ժամանակ հրահանգուիլ նորանով միայն:

Այս մրցողութիւնը կրօնի առաջին սկզբունքների հիմքն է: Բարձրագոյն օրէնքը բարձրացնում է մեզ դէպի 'Նա' Որի ներկայացուցիչն է խղճի օրէնքը: Այս մարդուս ինքն իրան մէջ խորատու գուիւն է, — ասում է Անտոնիկոս Մոզլին, — որի վերայ հիմնուած են բոլոր կրօնքները: Մարդս խորատու գուելով ինքն իրան մէջ և անսնելով իրան մէջ եղած մրցողութիւնը, նա ստանով իսկ ստանում են իսկ և առաջ ինքնաճանաչութիւն և ապա՝ Աստուածգիտութիւն: 'Նա այս կերպով ստանում է ճանաչելու և զգալու կարողութիւն՝ թէ՛ ո՛րն է իրաւացին և որն անիրաւը: Վորանով բարու և չարի մէջ ընտրութիւն անելու իրաւունքն է ստանում, և որովհետեւ ընտրութեան իրաւունքը իրան ձեռքն է մնում, հետեւաբար և ինքն է պատասխանատուն:

Ինչ բանի էլ տեսականութեամբ չհաւատային մարդիկ, բայց և այնպէս ոչ որ մեզանից չէ զգում իրօք, որ իրան վարմունքը լինէին անպայման, անհրաժեշտ և անխուսափելի: Մեր կամքը ոչ մի բանով չէ սահմանափակված և կապուած: Եւստ լաւ գիտենք, որ մենք ստիպուած չենք մի որ և է կախարղութեամբ անմիջապէս հնազանդուելու այս կամ այն գրգիռներին: «Մենք զգում ենք, — ասում է Ղօն Ստիւարտ Միլը, — որ եթէ կամենայինք մի որ և է ցանկութեան դէմ դնելու կարու-

ղութիւն ունեցածներս ապացուցանելու, այն ժամանակ կարող էինք այդ դիմադրութիւնն անել ուստի և այլապէս մտածելը ցածութիւն կլինէր մեր հպարտութեան դէմ, այլև կունենար մեր կատարելագործուելու ցանկութիւնը թուլացնող ներգործութիւն՝:

Տարակոյս չկայ, որ մեր վարմունքները կարող են վերաքննուիլ, այլապէս՝ չէին հրատարակուիլ բոլոր աշխարհում օրէնքներ. իսկ օրէնքները հրատարակվում են նորա համար, որպէս զի ստորադրուին նորանց, որովհետև ամենեքեան և իւրաքանչիւր ոք համոզուած է այն մասին, որ մարդիկ հնազանդվում են նորանց կամօջ, նայելով թէ որքան կամենում են նոքա հնազանդուիլ կամ չհնազանդուիլ: Մեղանից իւրաքանչիւրը խոստովանվումէ, որ իրօք մեր բոլոր սովորութիւններն ու փորձութիւնները բնաւ իսկապէս չեն տիրում մեր վերայ, այլ մենք ինքներս տիրում ենք նոցա վերայ: Մինչև անգամ ենթարկուելով փորձութիւնների, մենք մեր հոգու մէջ շատ լաւ հասկանում ենք, որ կարող էինք ընդդիմանալ նորանց, և որ՝ եթէ միայն ցանկանայինք բոլորովին նորանցից ազատուիլ, այն ժամանակ ևս չէին պահանջվում դորա համար մեր կարողութիւնից առաւել ո՛չ հզօր ցանկութիւն և ո՛չ հզօր կամք:

Նոքեւոր ազատութեամբ զուարճանալու համար հարկաւոր է, որ մեր միտքը զխտութեամբ զրգոնուած

լինի: Մարդու պատասխանատուութիւնը անումէ հա՛նձատաբար նորա մտաւորական ընդունակութիւնների զարգացման և խղճի կազդուրման հետ: Նա հնազանդումէ բարձր կամքի ազդեցութեան և ներգործումէ նորա հետ համաձայն, սչ բռնի, այլ յօժարութեամբ եւ այն օրէնքը, որ ստորադրումէ նորան՝ սիրոյ օրէնքն է: Գոխութիւն և հաւատարմութիւն ունեցող հաւատի մէջ փրթութումէ (բացվումէ) նորա մարդկութիւնը: Նա զգումէ, որ իւր ազատ գործողութեամբը, իւր այն շաւատովը՝ որ ունի դէպի Աստուածային կամքի նպատակը եւ դորա հետ համաձայն իւր զործերովը նա բարիքներ է անում եւ ապահովացնում իրան համար Գոբրագոյն բարին: „Առանց կրօնի մարդը — ասումէ շէր աւազ սարկաւազը — զիպուածների ստրուկ է. բայց կրօնը բոլոր դիպուածներից բարձր է կանգնում և նորանց վերայ բարձրացնումէ մարդուն:“ Իսկ թնօլմաս լինչը իւր Տէօփիլ Տախնալի մէջ ասումէ. — „Բանի որ չենք կանոնաւորուած՝ ազատ չենք: Վայրի կաղինը հարկաւոր է ձգել հողի մէջ, որպէս զի նորանից դուրս դայ կաղինն: Նաւա ունեցող մարդը մարդ է, որ թողած է արմատներ, արմատներ Աստուծու մէջ. մեր զործերը վկայում են մեր առ Աստուած ունեցած սրտի մասին:“ Նոր կտակարանի մէջ մենք զսնում ենք հեռեկալը „Ազատութիւնը այնտեղ է, ուր Տիրոջ հոգին է:“ Իսկ կառուպէրը ասումէ, „Ազատը նա է,

որուն ճշմարտութիւնը արեւ է ազատ իսկ բոլոր մնացեալները՝ ստրուկ են:՝

Եթէ այդպիսի աստուածային օրէնքի խոստովանութիւնը չկայ մարդու մէջ, նա իւր գործողութեան ժամանակ ստորադրվումէ զգայականութեան, կրքի և ինքնասիրութեան: Մարդիկ՝ արատաւոր հակամիտութեան բաւականացնելով գիտեն, որ վատ են վարվում: Խիղճը դատապարտումէ նորանց: Բնական օրէնքը ազդակումէ նորանց դէմ: Նորք գիտեն, որ ինքնակամ և մեղանչաբար վարվում են, նոցա ընդդիմութեան ոյժը թուլացած է արդէն ապագայի համար, նոցա կամբը կորսնցնումէ իւր իշխանութիւնը և մի նոր փորձութիւն երեւցած ժամանակ, նոցա ընդդիմութիւնը դորանից էլ թոյլ կլինի: Այն ժամանակ կազմվումէ սովորութիւն: Ամեն տեսակ չար գործի բանադրանքը այն է՝ որ տարածուելով ծնումէ նոր չարիքների կարգ:

Եւ այց խիղճը մեռած չէ: Մենք չենք կարող գերեզման փորել և հրամայել խղճին՝ որ պառկի այնտեղ: Մենք կարող ենք ոտնակոխ անել նորան, բայց դարձեալ նա կենդանի կը մնայ: Իւրաքանչիւր մեզքի կամ յանցանքի կատարուելու վայրկեանում, յայտնվումէ վրիժառու հրեշտակը: Մենք չենք կարող խղճի առաջ աչք փակել կամ ականջ գոցել: Մեզ ամենքիս երկշոտ է անում խիղճը:՝ Ահա որ դատաստանի օրը ստէպ հասնումէ մեզ վերայ մինչև անգամ այս աշխարհումս էլ, այս-

ինքն, երբ խիղճը կկանգնի մեր առաջ և զգուշացրնելով կհարկադրէ մեզ վերադառնալ դէպի առաքինի կեանքը: ✕

Խիղճը յաւիտենական է և ընդհանրական: Նա կազմումէ անձնական բնաւորութեան ճշմարիտ էութիւնը: Նա տալիս է մարդուն ինքնիշխողութիւն, փորձութիւններին ընդդիմանալու և նորանց հետ կռուելու ոյժ: Իւրաքանչիւր մարդ պարտական է զարգացնել իւր անձը, աշխատել կեանքի ուղղ ճանապարհը գտնելու և այդ ճանապարհով երթալու: Այդ բանի համար տրուած է նորան կամք, նա ունի ոյժ ինքն իրանը լինելու և ոչ թէ ուրիշի արձագանգ, ո՛չ ցածագոյն դրութիւնների անդրադարձութիւն և ոչ արտաքին պայմանների ստրուկ: Մարդու ճշմարիտ արժանաւորութիւնը՝ ծնվումէ ինքնիշխողութեամբ մեր գոյութեան ամենաբարձր պայմանների տակ ստորադրելով ցածագոյն ոյժերը: Ինքնիշխողութեան ընդարձակ և մշտական գործունէութիւնը ձեռք բերվումէ այն ժամանակ միայն՝ երբ պարտքի կտտարման մէջ առաջին տեղը բռնումէ խիղճը: Միմիայն խիղճը կանգնեցնումէ մարդուն իւր սեփական ոտների վերայ, ազատումէ նորան իւր սեփական հակամիտութիւնների և կրքերի արագետութիւնից: Նա կանգնեցնումէ նորան մարդկային ազգի լաւագոյն շահերի նկատմամբ: Օրս արձու թեան ճշմարիտ ազգիւրը գտնվումէ միմիայն պարտքի ճանապարհների վերայ, որը

զալիս է իբրև մի անկոչ քաղցրացուցիչ աշխատանքի, իբրև պսակ իւրաքանչիւր արդար գործի:

Խիղճը մարդու մէջ ամենաբարձր զարգացման հասնելով՝ դրդում է նորան իսկապէս գործել այն՝ ինչ որ ամենաբարձր և ամենամաքուր բաղդաւորութիւնը կարող է նորան տալ, և պահում է նորան այն ամեն բանից՝ որ կարող է անբաղդ անել նորան: «Շատ սակաւ մարդիկ կան, եթէ միայն այդպիսիներ ընդհանրապէս գտնվումէ քաղաքակրթութեան ժողովրդի մէջ, — ասում է շերբէրտ Սպենսէրը, — որոնք չպիտի համաձայնէին այն կարծիքին, որ մարդու բարօրութիւնը՝ Աստուածային կամքի հետ համաձայն չէ: Այս վարդապետութիւնը քարոզողներն են մեր բոլոր ուսուցիչները կրօնի, այս վարդապետութիւնը անպայման կերպով ընդունած են բոլոր բարոյագէտները. ուստի և մենք կարող ենք բոլորովին նայել այդ բանի վերայ, ինչպէս մի խոստովանուած ճշմարտութեան վերայ»:

Եթէ մարդու մէջ բացակայում է խիղճը՝ նա վարվում է իւր անձնական բաւականութեամբ, քան մի որ և է աւելի բարձր սկզբունքի զօրութեամբ: «Նա անում է այն՝ ինչ որ առաւել հաճելի է իրան, միևնոյն էր թէկուզ լինէր այդ մի կոշտ զգայական կամ իմացական զուարճութիւն: Բայց մենք ստեղծուած ենք ոչ միայն նորա համար, որ միմիայն մեր հակամիտութիւններին և ինքնաբաւար

կանութեան անձատուր լինենք: Բնութեան բոլոր կարգը ապստամբում է, կեանքի վերայ այդպիսի գաղափար ունենալու դէմ: Ոչ երբէք և ոչ մի որ և է դէպքում չպիտի ստրկանայ հոգին՝ մեր բնութեան ցածագոյն կողմի առաջը: Խիղճի բացակայութեան ժամանակ մտքից չանցկենալու բաներ են ինքնաշուհութիւնը, ինքնուբացութիւնը և ինքնասանձութիւնը, բացի, թերևս, այն դէպքերից, երբ մարդու ողու այս բարձր յայտնութիւնը՝ մարդկային օրէնքի հետևանքից խորշելու համար մի անհրաժեշտ բան լինէին:

Այսպիսի սկզբունքների վերայ հիմնուած հասարակութիւնը՝ մարդու բնական կրքերով և իմացական ոյժերով միասին, բայց որի (հասարակութեան) մէջ մարդկանց վարմունքը չի կառավարվում գրեթէ խաւորապէս խիղճի ազդեցութեամբ, այդ հասարակութիւնը աւելի շուտով կլինէր մի լիակատար անիշխանութիւն և չէր յապաղեր ենթարկուիլ ընդհանուր անկման: Մենք մասամբ իւրք սեսնում ենք արդէն դորա մի քանի հետևանքները անիմաստ շփոթութիւնների մէջ, որոնք դեռ ի նորումս աիրում էին Գերմանական և Ռուսաց նիհիլիստների մէջ և կրակով ու կործանմունքով, որոնցմով նշանաւոր արեց իրան Սոմնուսուների պատերազմը Փարիզում: Հասարակութեան մէջ այդպիսի սկզբունքի իշխողութիւնը կարող է հասցնել նորան (հասարակութեան) անհատական, հասարակական և ազգային

կատարեալ անբարոյականութեան:

Այդտեղ մնումէ միայն մի հնար, այսինքն, վերադարձնել մարդկանց դէպի պարտքի զգացմունքը: Մեր հայրերին բաժին ընկած էր իրաւունք ձեռք բերելու պարտականութիւնը, ուստի և մեր սերնդի պարտականութիւնն էլ թող լինի պարտքի զգացմունքը քարոզել և տարածել նորան: Հատուցէք իւրաքանչիւրին ըստ արժանաւորութեան, — արդարադատութիւնն է՝ առաքինութեան փայլը, իսկ բարեացականութիւնը՝ նորա ուղեկիցը: Աւետարանի այն խօսքը, որ անդադար մեր միտն է գալիս և որ պէտք էր բարոյականութեան գրքի իւրաքանչիւր էջի ճակատին դնել, այս է՝ «Վարուցէք ուրիշների հետ այնպէս, ինչպէս որ կամենում էիք դուք, որ նորանք վարուէին ձեզ հետ»: — «Վեանքի մէջ — ասումէ Վիլհելմը՝ Հումբոլդը — նկատելու արժանի է մանաւանդ այն հանգամանքը, երբ առանց անձնական բաղդաւորութեան կամ անբաղդութեան գաղափարով չափազանց վերդովուելու, բացառապէս յանձնվում ենք պարտքի խիստ կատարման, այն ժամանակ բաղդը կարծես ինքնին գալիս է, մինչև անգամ սորանից էլ աւելին ասեմ, զրկանքներով, անհագատութիւններով և հոգսերով լին կեանքիցն էլ անգամ յառաջ է գալիս բաղդը:»

«Ինչո՞ւմն է կայանում ձեր պարտքը, — հարցնումէ Պետտեն: — Հանապազօրեայ գործերի կատարման մէջ՝ քանի որ դուք ապրում էք:» Բայց այդ-

պիսի մի հայեացք պարտքի վերայ շատ նեղ է: «Ո՞րն է — հարցնումէ նա, — լաւագոյն կառավարութիւնը: — Այն է, որ ուսուցանումէ մեզ անձամբ անձին կառավարել:» Պլուտարքոսը Տրոյանոս կայսրին ասաց, «Վո կառավարութիւնը թող սկսուի քո սեփական կուրծքի մէջ. իսկ նորա հիմը՝ թող լինի քո սեփական կրքերի վերայ իշխելը:» Այս խօսքերի մէջ պարունակվումէ ինքնիշխողութիւնը, պարտքն ու խիղճը: «Վուզայ ժամանակ — ասումէ Հուկեր եպիսկոպոսը — երբ ողջախոհութեամբ և հեղութեամբ արտասանուած երեք խօսքի համար, պիտի դրուի առաւել բարձր վարձ, քան թէ այն երեք հազար հատորներին, որ գրուած են արհամարհելի սրամտութեամբ:»

Հոգու համար օգտակար է այն տեսակ գործերը, որոնք կատարվում են սիրով, ո՛չ ինքնասիրութեան նպատակների համար, այլ իբրև պարտք ողորմութեամբ և սիրալիր բարութեամբ: Սիրոյ համար կատարուած շատ գործերը, հազար անգամ լաւ են փողի համար կատարուածներէից: Առաջիններով արթնանումէ հերոսութեան և ինքնուրացութեան հոգին. վերջինները կորսվում են ստանալով իրանց վարձը: Պարտակատարութիւնը՝ որի համար վճարում են, շատ սակաւ գնահատվումէ առհասարակ: «Հարստութիւնից, պատուից և մինչև անգամ առողջութիւնից էլ բարձր համարում եմ — ասումէ Արնօլդ բժիշկը — բարձր բարոյակա-

նութեան տէր մարդկանց յանձնուիրը, վասն զի բարու, մեծահոգու և ճշմարտի հետ հոգևով կապուելը նշանակումէ մարդուս իրան էլ մասամբ իւրիք լինել բարի, մեծահոգի և ճշմարիտ:—

Իւրաքանչիւր մարդ պարտական է ծառայել ինքն իրան՝ ինչպէս իւր անձին և իւր մերձաւորներին: Պեանքը իսկապէս սակաւագին բան է, թէ որ պարտքը չըսրբացնէ նորան:

„Եպա ցոյց սուր այն յատուութիւնները,— ասումէ Մարկոս Աւրելիոս Անտոնինոսը,— որոնք ունենալը միշտ քո ձեռքն է, այսինքն, անկեղծութիւնը, ծանրաբարոյութիւնը, աշխատանքի մէջ հաստատամտութիւն, զղուանք դէպի զուարճութիւններ, բաւական լինել քո վիճակով, սակաւապիտուութիւն, բարեհամբոյր, պարզամիտ և մեծահոգի լինել:“

Ամենամեծ մտաւորական ոյժը կարող է գոյակից ունենալ կատարեալ անմեծահոգութիւն: Այնքինը ծնվումէ մարդու հոգու մէջ եղած բարձր ոյժիցը՝ այսինքն, խղճից և բարձր ընդունակութիւնիցը—բանականութիւնից և հաւատասիրութիւնից, այնպիսի հաւատասիրութիւնից, որ տալիս է մարդուս միջոց իւր զգայարանքներին մաաշելի եղածից առաւել հասկանալու կարողութիւն: Հաւատասիրութիւնը բանական էակ է անում մարդուն, նորան բարձր է դասում կենդանուց: Վարուինը ճիշտ նկատած է, որ մարդուն կենդանուց ունեցած

ամենանշանաւոր զանազանութիւնը նորա պարտաճանաչութեան և զգացման հետ կապուած խղճի թելադրութիւնքն են:

Մեզ ուսուցանում են հաւատալ նիւթի ամենակարողութեան, մենք պէտք է հաւատանք միմիայն մեր տեսածին և շոշափածին: Չպիտի հաւատանք ինչ որ չենք հասկանում: Բայց ո՞րքան քիչ է մեր գիտցածն ու հասկացածը: Մենք տեսնում ենք իրեքի դրսի կողմը միայն „իբր աղօտ հայելու միջից գուշակաբար:“ Ինչպէս կարող է նիւթը օգնել մեզ կեանքի գաղտնիքները հասկանալու: Մենք բնաւ ոչինչ չգիտենք կամքի, զգացմունքի և մտքի գործունէութեանց պատճառների մասին: Մենք գիտենք որ նոքա կան, բայց նորանց հասկանալ չենք կարող:

Մի երիտասարդի, որը ասում էր թէ ինքը ցանկանում է այն բանին միայն հաւատալ՝ ինչ որ հասկանումէ,— Պարր բժիշկը պատասխանեց այսպէս. „Ուրեմն, պարոն, ձեր դաւանանքը կ'լինէր ամենահամաձայն այն մարդկանց դաւանութեան, որը երբ և իցէ յաջողուել է ինձ լսել:“ Բայց Սիդնէյ Սմիտի խօսքը դորանից էլ առաւել սրամիտ էր: Մի անգամ շօլլանդացի ուղևորմ ճաշի ժամանակ հիւրերից մէկը, որ օտարազգի էր, ասաց թէ ինքը բուն նիւթապաշտ է: Ընտրով Միլնէյ Սմիտը մի կերակրի առթիւ ասաց. „Ե՛հա շատ լաւ կերակուր:“ Եւ յ խօսքի վերայ նիւթապաշտը շտա-

պեց աւելացնել. «Այո, պարոն, դա աննման է»։—
Ուրեմն, համարձակվում եմ ձեզ հարցնել,—պատասխանեց Սմիտը իւր սովորական յաջողակութեամբ,
—հաւատում էք դուք արդեօք խոհարարին»։

Մեզ պատահումէ մեր չհասկացած միլիոնաւոր բաներին հաւատալ։ Այլ թէր և նորա այլևայլ զուգակցութիւնը նոյնպէս մեծ գաղտնիք է, ինչպէս կեանքը ինքնին։ Այսպէս է այս անհամար հետաւոր ելկիւնների վերայ, որոնք վստահութեամբ դառնում են իրանց որոշեալ շրջաններում. նայեցէք մեր սեփական մոլորակին, որ իւր առանցքի վերայ կատարումէ հանապազօրեայ շրջանը և միանգամայն տարեկան ընթացքը արեգական չորս կողմը։ Միթէ հասկանալի են մեզ այդ շարժումների պատճառները։ Մի թէ այդ շարժողութիւնների իսկպէս գոյութեան փաստից մի աւելի բան գիտենք նոցա մասին։

«Արեւի շրջանական դարձումն երկնքի հաստատութեան մէջ,—ասումէ Պասկալը,—որքան էլ ընդարձակ լինի, ինքն ըստ իւրեան հազիւ աննշան կէտ է, համեմատելով այն շատ առաւել ընդարձակ շրջանական դարձումի հետ, որ կատարում են աստղերը։ Մինչև անգամ տեսողութեան սահմաններից դուրս եղած այս աշխարհը մի առաւել բան չէ, եթէ ոչ՝ մի կէտ բնութեան լայնատարած ծոցում։ Մենք կարող ենք գաղափար կազմել հիւսնների մասին ոչ այլ կերպ, բայց եթէ համեմա-

տելով այն իրականութեան հետ, որ մի անվախճան սահման է. որի կետերը ամենայն տեղ է, իսկ շրջապատը՝ ոչ ուրեք։ Ի՞նչ է մարդս այս անվախճանութեան մէջ։ Բայց կայ դեռ ևս մի ուրիշ բան, որ ոչ սակաւ ապշեցնող է. այսինքն, այն անվախճան բանը, որ կայ նորա ոտքի տակ։ Թող նա զընդէ փոքրագոյն միջատը, որն որ ընկնի նորա աչքովը, ասնք միջիւնը կամ ունկնամուկը. նա ունի անդամներ, երակներ և արիւն, որը դառնումէ այս երակների մէջ, զնտակներ կան այս արեան մէջ, նա ունի խուղ և աւիշք։ Այս հիւսնի սահմաններում ես ձեզ ցոյց կտամ ոչ միայն տեսանելի աշխարհը, այլ և բնութեան անսահմանութիւնը իսկ։ Այն մարդը, որ հետաքրքրվումէ և պարագումէ այս տեսակ մտքերով՝ պիտի զարհուրի իւր վերայ մտածելով. նա երկնչումէ ճիշտ հասկանալով իւր սեղը բնութեան մէջ, իբր կախ եղած անվախճանութեան և ոչնչութեան մէջ տեղումը։ Այս հրաշքների Արարիչը միայն կարող է հասկանալ այդ բանը, «Նորանից զատ ոչ ոք չէ կարող հասկանալ»։

Պոնֆուկիոսը քարոզում էր իր աշակերաններին, թէ համբերութիւնը կազմումէ իբր երեք քառուղի կեանքի։ «Պատուաւորապէս մտածեցէք և առաքինութեամբ վարուեցէք։ Պիտութիւնը, մեծահոգութիւնը և քաջասրտութիւնը պարտաւորիչ բաներ են առ հասարակ ամենի համար։ Կեանքի վերայ ծանրահայեացքը, հոգու ազնուութիւնը,

Ճշմարտութիւնը, մաքրասրտութիւնը, բարութիւնն են ահաւասիկ այն յատկութիւնքը, որոնցից կազմվումէ ամենակատարեալ առաքելութիւնը՝ Այս խօսքերը հասնում են մեզ իբրև հեռաւոր արձագանգ այն մեծ ուսուցչի, որը սորանից հաղաբաւոր տարիներ առաջ ապրում էր. այդ իմաստուն Առնֆոլկիոս մարգարէն է, ինչպէս որ նորան մեծարում էին իրան աշակերտները:

Բայց այս բոլոր առաքելութիւնքը ծագվում են մարդու մէջ գտնուած բնական ներքին դաստիարակչի, այսինքն, խղճի շնորհիւ: Խիղճն է այն հիմնական սկզբունքը, որից բխում են վարքի բոլոր հեռաւորագոյն կանոնները: Նա հրամայումէ մեզ արդարութեամբ վարուել և զգուշանալ այն վարժունքներ/ց, որոնք անարդար են համարվում: Խիղճը հասնելով մեր մէջ լիակատար զարգացման, հարկադրումէ մեզ գործել այն, ինչ որ ուրիշներին տալիս է բաղդաւորութիւն. և արգելումէ գործել այն, ինչ որ կարող է պատճառել ուրիշներին անբաղդութիւն: Ամենից առաջ և զլիաւորապէս պէտք է խոր կերպով ըմբռնել այն բարձր վարդապետութիւնը, թէ մարդս պարտական է պարտքի խիստ կատարման ճանապարհի վերայ հաստատուիլ և արդարացի վարուիլ, փնտռելով իւր բաղդն ու ներքին աշխարհը այն բանի մէջ, որը անկողոպտելի է իրանից: Խիղճը այն մրցումն է, որի ճանապարհով մենք հասնում ենք յաղթութեան,

տիրապետում ենք մեր սեփական պակասութիւնները: Այդ մի համր, բայց ներքին մարդու անխոնջ աշխատանքն է, որով ապացուցվումէ նորա կամքի անսովոր ոյժը և աստուածային մասնիկների ներկայութիւնը նորանում:

Մանթանայով հին Յոյների մի քանի արիասիրտ մեծագործութիւնների հետ, մենք էլ կարող ենք մի քանի բան սովորել պարտքի մեծ առաքելութեան նկատմամբ: Սմանք Սոկրատին համարում են յունական փիլիսոփայութեան հիմնադիր: Նա այն համոզմունքն ունէր, որ մասնաւորապէս իրան վերայ դրուած է՝ մարդկանց մէջ բարոյական զիտակցութիւն զարթեցնելու կոչումը: Նա Ք. Մ. 468 տարի առաջ ծնաւ Աթէնքում և ստացաւ շատ լաւ կրթութիւն, որպիսին կարող էր ստանալ այն ժամանակուայ Աթենացին: Նախ և առաջ նա պարապեցաւ քանդակագործութեամբ, որով անուն անգամ ստացաւ մասամբ: Յետոյ առհասարակ բոլոր Աթէնքի քաղաքացիների պարտականութեան համաձայն, նա զինուորականութեամբ ծառայեց հայրենեաց: Արդման ժամանակ նա միւս երիտասարդների հետ միասին արտասանեց հետեւեալ երդումը.— «Արդուեմ չանպատուել իմ երկրի ինձ հաւատացած սրբազան զէնքը. նոյնպէս և չթողնել իմ պաշտպանութեան յանձնուած պաշտօնը»:

Նա իւր գտնուած բոլոր պատերազմների մէջ շատ քաջութիւն և արիութիւն ցոյց տուաւ: Պօ-

տիղէի մօտ պատահած գործերից մէկի մէջ, Ալի-բիադէս վերաւորուած ընկաւ թշնամեաց շարքերում: Սոկրատ առաջ նետուեցաւ ազատելու նորան և ձեռնորդի վերայ բերեց նորան իւր բոլոր զէնքերով Աթենացոց բանակը: Նորա այս քաջազնական վարմունքի համար վճռեցին տալ իբրև քաջութեան վարձ, քաղաքական պսակ — այժմեան Հնդկաստանի կայսերուհւոյ շքանշանը: Արկրորդ պատերազմի մէջ ցոյց տուեց նա ոչ սակաւ արիութիւն: Գեղեցիկ մօտ եղած զժբաղդ պատերազմում ազատեց նա Վսենոփոնդի կեանքը, որին պատերազմի դաշտից տարաւ ուսերի վերայ, պաշտպանուելով ճանապարհին թշնամիներից: Նա կատարեց նոյնպէս և մի արշաւանք, որից յետոյ մի քանի ժամանակ նուիրեց իւր անձը քաղաքական ծառայութեան:

Իբրև Աննատօր ոչ սակաւ արիութիւն ցոյց առաւ, ինչպէս որ զինուորական եղած ժամանակը: Նա իշխում էր այն բարձր բարոյական արիութեամբ, որն ունենալով մարդ աներկիւղ զնումէ ոչ միայն, մահի առաջ, այլ մինչև անգամ հակառակ կարծիքների դէմ: Նա համարձակութեամբ յառաջ էր կանչում ինչպէս մի բռնաւոր, այնպէս էլ բռնաւորական խումբ: Արգինուզեան կղզիների մօտ եղած պատերազմից յետոյ, երբ ծովապետները դատաւտանի տրուեցաւ այն պատճառաւ, որ նորանք չէին կարողացել սպանուածների մարմինները

աղտոտել, Սոկրատը միմիայն նորանց պաշտպան հանդիսացաւ: Ժողովուրդը կատաղեցաւ: Սոկրատ խորհրդարանի անդամութիւնից դուրս ձգուեցաւ և ծովապետները դատապարտուեցան:

Այն ժամանակ Սոկրատը նուիրեց իւր անձը դասատուութեան գործին: Նա դասախօսում էր հրապարակներում, մանում էր արհեստանոցները և այցելում էր ուսումնարանները այն նպատակով, որ ծանօթացնէ ժողովրդին իւր այն հայացքների հետ, որ վերաբերվում էին մարդկային գործողութիւնների և մտաւոր տեսութիւնների նպատակի եւ նշանակութեան: Նորա վարդապետութիւնը սկսուեցաւ կատարեալ սկեպտիկեան ժամանակում: Նա աշխատում էր փոխել մարդկանց բնութեան վերայ ունեցած բնազդական տեսութիւնները, այն տեսութիւնները, որոնք տանում էին նորանց դէպի կասկածանքի անել շփոթութիւնը: «Արժէ՞ արդեօք ապրել» — այս հարցմունքը ինչպէս այժմ, այնպէս էլ այն ժամանակները՝ փոքր բան չէր: Սոկրատ խորհուրդ էր տալիս նորանց, նայել նոյն իսկ իրանց խորքում: Մինչդեռ մարդիկ աստուածների գութը շարժելու վերայ հոգացողութիւն էին անում, նա պնդում էր թէ՛ գործողութեանց բարոյական կերպն է միմիայն այն ճանապարհը՝ որը կարող է տալ մարդուն բաղդաւորութիւն, ինչպէս ներկայ, այնպէս էլ ապագայ կեանքում:

Սոկրատ շարունակում էր քարոզել իւր վար-

դապետութիւնը, որին ոչ սակաւ հետևողներ եղան ինչպէս երիտասարդներէց, այնպէս էլ չափահասներէց: Արիստիպպաս առաջարկեց նորան մի մեծ գումար, բայց այդ առաջարկութիւնից վճռապէս հերքուեցաւ: Սոկրատ ոչ թէ փողի համար էր ուսուցանում, այլ բանական տեսութիւնների տարածման համար: Այդ պատճառաւ նա յայտնեց, թէ իրեն հաճելի լաւագոյն վարձը միայն այն համոզմունքն է, որ նորա տշխատութիւնը ծառայում են մարդկային բարութեան:

Նա չէր վարդապետում զլքերի հիմանց վերայ՝ սոսկ դատողութիւն էր անում: «Գրքից — ասում էր — բան հարցնել կարելի չէ, նա չէ կարող պատասխանել և այս պատճառաւ ահա կարող չէ նա ուսուցանել: Նորանից մենք կարող ենք իմանալ միմիայն այն, ինչ որ առաջ գիտէինք»: Նա աշխատում էր բոլոր իրերը վերածել դէպի նախնական սկզբունքները և այդ կերպով հասնել ստուգութեան՝ ինչպէս ճշմարտութեան չափի: Նա հաւատում էր առաքինութեան միութեան և կարծում էր, որ կարելի է աւանդել նորան՝ գիտութեան առարկայի տեղ: Նորա կարծիքով միմիայն թանկագին փիլիսոփայութիւնն այն է, որը ուսուցանումէ բարոյականութեան պարտքն ու կրօնի յոյսերը: Նա ատում էր անիրաւութիւնը և ամեն տեսակ յիմարութիւն և միշտ մատնացոյց էր լինում նորանց վերայ: Արհամարում էր այն մտքը,

թէ իբր ամեն մարդիկ էլ կարող են կառավարիչ լինել: Նա կարծում էր, թէ միմիայն իմաստունները կարող են կառավարել և թէ՛ սակաւ՝ են իմաստուն մարդիկ:

Սոկրատ եթեանասուն երկու տարեկան հասակում դատաստանի տրուեցաւ: Նորան ամբաստանում էին՝ թէ Սոկրատը — չարագործ և երիտասարդութեան մոլորեցուցիչ է: Նա չէ հաւատում տէրութեան խոստովանած աստուածներին, այլ նոր աստուածութիւններ է մտցնում: Այս հիմանց վերայ նորան դատեցին և ի մահ հատապարտեցին: Նա բանտարկուեցաւ և երեսուն օրուայ ընթացքում խօսում էր իւր բարեկամների հետ իւր սիրելի բնաբանի վերայ: Արիտոնը հնարք գտաւ որ նա փախչի բանտից, բայց նա չկամեցաւ այդ դէպքից օգուտ քաղել: Նա խօսում էր հոգու անմահութեան, *), արիութեան, առաքինութեան, չափաւորութեան, անպայման գեղեցկութեան և անպայման բարութեան, իւր կնոջ և երեխայոց վերայ:

Նա մխիթարում էր իւր լացող բարեկամներին, բարեկամաբար հեղութեամբ յանդիմանելով

*) Եթէ մահն — ասումէ նա — ամեն բանի վախճան լինէր, այն ժամանակ մարդկանց իրանց կամեցածին պէս մեռնելը՝ մի արատաւոր բան կլինէր, որովհետեւ նորանք բարեյաջողութեամբ կբաժանուէին ոչ միայն իրանց մարմիններից, այլ և իրանց չար գործերից, իրանց հոգու հետ միասին: Բայց որովհետեւ ակներեւ անմահ է հոգին, այդ պատճառաւ չարի համար չկայ մի այլ թեթևութիւն կամ փրկութիւն, բայց եթէ բարձր առաքինութեան և իմաստութեան հասնելը: — ԳԼԱՅՈՒՆ

նոցա իրանց այն գանգատների համար, որ անուժ էին նորա իրան մասին եղած վճռի անիրաւութեան վերայ: Մի վայրկեան ևս և նա պէտք է մեռնէ: Ինչո՞ւ համար նորանք ցաւում են և տրտնջում: Նա արդէն ծերացել էր: Միևնոյն է, թէ և չին էր այդ վճիռը, նորա կեանքը շատ շուտ պիտի դադարէր բնական օրէնքի ուժով: Ոչ մի ժամանակ ոչ որ դեռ մեռած չէ առաւել խոր և հաստատուն հաւատով, թէ մահն է միմիայն անցնել զէպի նոր ամենաբարձր էութիւն: Այլ քրջապէս հասաւ օրհասի վայրկեանը, երբ բանտապետը տուաւ նորա մոլեխիճը թունով բաժակը: Եներբ և հաստատուն կերպով դատարկեց նա մահաբեր բաժակը և կատարեալ հանգստութեամբ մեռաւ: Եյսպէս էր — ասումէ Փէտոնը — մեր բարեկամի վախճանը, որին ճշմարտապէս կարող եմ կոչել իմաստուն, արդար և ամենալաւն այն մարդիկներէց, որոնց ես երբ և իցէ ճանաչած եմ“:

„Եւթողջ դարերի ընթացքում մարդիկ պահում էին այս փիլիսոփայի յիշատակն և ցարդ ևս սիրով և յարգանքով յիշում են նորա մեծ առաքինութիւնների, ծառայութիւնների և տխուր ճակատագրի մասին — ասումէ Մէն Լիւիսը իւր փիլիսոփաների կենսագրութեանց մէջ. — բայց, ախոս, որ չէ կարելի ասել, որ նորա օրինակն ունենար նոցա վերայ մանաւանդ հզօր ազդեցութիւն կամ թէ նոքա ծանօթանալով նորա կեանքի հետ, սո-

վորէին համբերութիւն և անյիշաչարութիւն: Նորա անուժը՝ աշակերտների և հռետորների բարոյական վարդապետութեան դատողութիւնների բնաբանը եղաւ: Յանկալի էր որ նորա օրինակը՝ բարոյական ազդեցութեան ոյժ ստանար:

Սոկրատ գրքեր չէր գրում: Գրեթէ ինչ որ նորա մասին գիտենք, քաղուած է նորա երեւելի աշակերտների, Պղատոնի և Վսենոփոնդի աշխատասիրութիւններից, որոնք յաւերժացուցին նորա գործերի, վարդապետութեան, անբաղդութիւնների և մահուան յիշատակը: Պղատոնը աշակերտեց նորա մօտ ամբողջ տասը տարի. ի վերջոյ նա գրեց իւր երեւելի „խօսակցութիւնների“ մէջ իւր մեծ ուսուցչի հայացքներն սւ կարծիքները: Բայց այդ „խօսակցութիւնների“ մէջ դժուար է որոշել թէ ո՞րն է յանուանէ պատկանում յատկապէս Պղատոնին և ո՞րը Սոկրատին: Երբ մահն անջատեց այս երկու բարեկամներին, Պղատոն 40 տարեկան հասակում ուղևորուեցաւ զէպի Սիկիլիա: Եյստեղ նա բարեկամացաւ Սիրակուսացոց բռնաւոր Գիոնէսիոս Ե հետ, յետոյ երբ նոցա հայացքը քաղաքականութեան վերայ անհամաձայն եղաւ միմեանց, որովհետև Պղատոնը անվեհեր և համարձակ խօսում էր ազատութեան վերայ: — Գիոնէսիոսը դատապարտեց նորան ի մահ: Բայց Գիոնէսիոսի եղբայր Գէոնը պաշտպանեց նորան և սորանով փրկեց նորա կեանքը: Մահուան պատժի տեղ հրա-

մայուեցաւ վաճառել նորան իբրև ստրուկ: Բարի-բաղդաբար գնեց նորան, իրան բարեկամներից մին, որ իսկոյն շնորհեց նորան ազատութիւն:

Սորանից յետոյ Պղատոն վերադարձաւ Աթէնք և սկսեց քարոզիլ իւր վարդապետութիւնը. Սոկրատի նման ուսուցանում էր նա ձրիաբար: Մեզ հարկ չկայ քայլ առ քայլ դիտել նորա ետեւից, բաւական կլինի եթէ ասենք, որ նա գլխովին յանձնուած էր մարդկանց մէջ ճշմարտութիւնը, բարոյականութիւնը և պարտաճանաչութիւնը ըստ կարելոյն զարգացնելու ջանքերին: Նա չորս գլխաւոր առաքինութիւնները ստորաբաժանեց հետեւեալ կերպով. 1) խոհեմութիւն և շրջահայեցութիւն. 2) արիութիւն, տոկունութիւն և քաջութիւն. 3) ժուժկալութիւն, համեստութիւն և ինքնիշխողութիւն. 4) ճշմարտութիւն և արդարութիւն: Առաքինութիւնների այս ստորաբաժանմունքը նա իւր բարոյական փիլիսոփայութեան հիմունք դրեց: „Ամեն կարգի և վիճակի մարդիկ, — ասումէ նա, — միևնոյն է, թէ ունեն նորա կեանքում յառաջագիմութիւն կամ չունեն, բաղդաւորութեան մէջ են թէ դրժբաղդութեան, թող կատարեն իրանց պարտքը և զոհ թող մնան“: Ինչպիսի վսեմ վարդապետութիւն բովանդակվումէ այս խօսքերի մէջ բոլոր ապագայ սերունդների համար:

Պղատոնը իւր կեանքի վերջին օրերը անցկացրեց իւր ճեմարանի միայնութեան անդորրութեանը

մէջ: „Խօսակցութիւնների“ հեղինակութիւնը, որոնցմով նա շահում էր դէպի իրան սերնդի խորին զարմանքը՝ նորա կեանքի քաջալերական խրատոյսն էր, յանաւանդ իւր ծերութեան հասակում: Նորան կոչում էին Աստուածական Պղատոն: Նորա հոգին տենչում էր ճշմարտութեան: Միակ ճշմարտութիւնը — ասում էր նա — մարդկային բոլոր ձգտողութիւնների գլխաւոր նպատակը պիտի լինի: Նա, ինչպէս և իւր ուսուցիչը, գերագոյն բանականութեան զաղափարի հետ անբաժան կապում էր բարութիւն, արդարութիւն և իմաստութիւն. նոյնպէս և այդ բանակունութեան մարդկային գործերի մէջ ունեցած անմիջապէս միջնորդութեան հայացքը: Նա չէր սիրում ոտանաւորներ, ինչպէս որ չէր սիրում հանգուցեալ Վարլէյլը*): Նորա հաւա-

*) Վարլէյլն ասումէ, եթէ դուք մի սր և իցէ օգտակար բան պիտի ասէք մարդկանց, ինչո՞ւ էք այդ երգում: Ինչ միշտ երևում էր մեծ դժբախտութիւն մարդու համար այն հանգամանքը՝ որ նա մի որ և է խօսքերի ձեռով պիտի արտայայտէր իւր ձիրքերն և ոչ թէ «Աստուածային լռիկ գործողութեամբ, որը միակ կարող է լինիլն արտասանել նորա ձիրքերը՝ Ներկայ սերնդի վերաբերմամբ ես միշտ ավտասացել եմ որ մարդիկ ստացած լինելով աստուածութիւնից հանճար՝ (սրը նշանակումէ մտքի արիութեան և կարողութեան լոյս կամ բոլորովին ոչինչ չեն նշանակում,) մի այնպիսի լուրջ ժամանակ, ինչպէս հետզհետէ լինումէ մեր ժամանակը, կամակորութեամբ շարունակում են իրանց ունեցած աստուածային ձիրքերն ոտանաւորների ձեռով արտայայտել, որոնց այժմ ոչ քր չէ կարգում սրտանց:

Միւս կողմից Մեդիու Սրնուլը՝ «The Englisht Poets» ներածութեան մէջ ասումէ, թէ նայելով անցքերի ընթացքին՝ մարդկութիւնը հետզհետէ յենկումէ բանաստեղծութեան վերայ: «Զկայ այն հաւա-

նաճ միակ բանաստեղծութիւնն էր՝ բարոյական բանաստեղծութիւնը, որ իսկապէս ոտանաւոր իմաստասիրութիւն է: Պէտք չէ մոռանալ, որ Պղատունը ապրում էր գրեթէ 400 տարի Վ. Ա., խօսելով նորա մասին Պօլլիքիճը անուանումէ նորան քրիստոնէական թուականի բնական կարապետ (յառաջընթաց): Բայց կոմս Վէօմէստրը սովորաբար ասում էր. «Վեննը մեզ համար մի կանոն, որ Պղատունի հետ չխորհրդակցած՝ ոչ մի երեւելի հարց չվճռենք»:

Նոր կտակարանը տալիս է մեզ մարդկային կարելի կեանքի բարձր գաղափարը, բայց դիւրին չէ այն մարդու ճանապարհը, որ ձգտումէ այդ լուսաճաճանչ գաղափարին՝ տիրապետող տեղ տալ իւր հոգու մէջ: Մենք զգում ենք, որ կայ մի բան, որը մեր վերայ իբրև պարտականութիւն տրուածից առաւել ցանկանում ենք անել: Բայց պարտքը կանգնած է մեր առաջ և պէտք է կատարուած լինի առանց յապաղմունքի և դատարկ մտածմունքի: Ինչպիսի առողջ բարոյականութեան և բազմադարձութեան փիլիսոփայութիւն է պարունակվում

տը — ասումէ նա — որ չլինէր խախտուած, չկայ մի հաւաստի խոստովանուած վարդապետութիւն, որի երկրայութիւնը ապացուցուած չլինէր, չկայ մի ամենից ընդունուած աւանդութիւն՝ որի քանդումն կարելի չլինէր սպասել: Մեր կրօնը նիւթականացել է երթարելի փաստով. զգացմունքները՝ փաստի կապուած էին, իսկ այժմ փաստը նորանից հեռանումէ: Իսկ ինչ վերաբերվումէ բանաստեղծութեան, գործ համար բոլոր բանը միմիայն մտածմունքն է. իսկ մնացեալն է աշխարհ ցնորքների, աստուածային ցնորքների:

այս կանոններիս մէջ, թէ «ինչ գործ որ ձեռքդ ընկնի՝ ամենակարելի եռանդով արա»: Այն բան ըստ կարելոյն լաւ անել աշխատողը՝ ինչ վիճակից և լինի, անտարակոյս կանգնումէ յառաջադիմութեան ճանապարհի վերայ:

Պատմում են թէ մէկը սարսափելի յուսահատութեան ըրպէին չէր երկնչում բացականչել. «Ննօզուտ է ձգտիլ դէպի բարին, որովհետև մարդ չի կարող ինքն իրան առաքինի լինել. իսկ կարողացած ժամանակն էլ մի օգուտ չէր բերում իրան»: Այդ յուսահատական խսրքերը՝ անձշտութեամբ և անբարեխղճութեամբ լի էին, որովհետև խոսքի և գործի մասին այդպէս խօսելը՝ բարեխիղճ և լաւ բան չէ: Մեզանից իւրաքանչիւրին կարողութիւն է տրուած գէթ մի փոքր օգուտ բերել իւր զրտնուած շրջանում: Իսկ այդ բանն անելու կարելիութիւնը՝ պարտաւորումէ մեզ դէպի այդ: Մենք իրաւունք չունենք անօգուտ ապրելու, ինչպէս որ ինքնասպանութեան իրաւունք չունենք:

Մենք պարտական ենք բարեխիղճ լինել ինչպէս փոքր առարկաների, այնպէս էլ մեծերի մէջ: Մեզանից պահանջվումէ, որ մեծամեծ օգուտներ քաղենք ինչպէս մեզ տրուած տաղանդից, այնպէս էլ շատերից: Մենք կարող ենք մեր խղճի հրամաններին հետեւել և երթալ, թէև միայնակ, պարտքի կատարման ճանապարհով: Մենք կարող ենք պատուաւոր, ճշմարտասէր և աշխատասէր լի-

նեւ, թէև այդ ինքնայարգութեան մտքով լինի: Մենք պարտական ենք հաւատարիմ լինել մինչ ցվախճան: Ով չի հիանում այն ստրուկի պատասխանի վերայ, որին երբ հարցնում էր գնողը, թէ «կլինե՞ս դու հաւատարիմ եթէ ես քեզ գնեմ» պատասխանեց. կլինեմ, կամենաք գնեցէք, կամենաք մի գնէք, ինչ համար միևնոյն է:

Մեկլէոզի՝ աստուածաբանութեան հանգուցեալ վարդապետի՝ Գլասգովի եկեղեցիներից մէկի մէջ խօսած քարոզի մեկնութեան մէջ ասվումէ, թէ քարոզիչը մեծ նշանակութիւն տալիս էր բարոյականութեան: Բարոյականութիւնը պէտք է լինի ինչպէս բարձր՝ այնպէս էլ ստորին դասակարգի մարդկանց առաջին և զլիսաւոր նպատակը: «Արքայզն Ալբերդի իրանից յետոյ թողած ամենաթանկագին բանն ասումէ քարոզիչը—պատուաւոր անունըն է: Աս շատ լաւ գիտեմ, որ խիստ շատ աղքատ մարդիկ մտածում են թէ իրանք չեն կարող ունենալ պատուաւոր բարի անուն: Բայց այդ ճշմարիտ չէ. ուստի և չեմ կամենում լսել այդ: Ներկայ գտնուողների մէջ, չկայ այն մարդը կամ այն կինը, ինչքան էլ աղքատ լինէին նորանք, որ չեկարողանային Աստուծոյ օգնութեամբ թողնել իրանցից յետոյ մի լաւ բան, որը կարող է մարդ թողնել երկրիս վերայ, այսինքն բարի, պատուաւոր անուն և նորանց զաւակները կարող լինէին գնալ այն հետքերով և շնորհակալ լինել Աստուածանից

նորա համար, որ իրանց մայրն եղել է պատուաւոր և բարեպաշտ կին և հայրը պատուաւոր և բարեպաշտ մարդ»:

Բարի, պատուաւոր անունը՝ ստացվումէ ամենափոքր պարտականութիւնները բարեխղճաբար կատարելով, այսինքն ինքնուրացութեամբ, մերձաւորի բարիքի համար ինքնազոհ լինելու պատրաստականութեամբ, սիրոյ, ողորմածութեան և պարտքի գործերով: Պատուաւոր անուն և բարոյականութեան հիմունքը, դրվում են ընտանիքի մէջ. լաւ են թէ վատ բնական հակամիտութիւնքը, ազդեցութիւնքն ու օրինակները՝ որոնք տնային կացութիւնից հանվում են ըստ մեծի մասին, տալիս են նորանց վերջնական ուղղութիւն: Ամենամանր գործերում բարեխիղճ մարդն, ամենամեծ գործերումն էլ բարեխիղճ կլինի. իսկ ամենաչնչին գործերում անբարեխիղճը, կեանքի ամենավսեմ գործերումն էլ անբարեխիղճ է: Բարին բարուն հրաւիրումէ, իսկ ճշմարտութիւնը և հաւատարմութիւնը բերում են ճշմարտութեան եւ հաւատարմութեան առատ հունձք: Է շատ մանր բարի գործեր կան, որոնք շատ լաւ ծանօթացնում են մեզ մարդու ճշմարիտ բնաւորութեան հետ, բան թէ բարձրահնչիւն նախադասութիւնների ամբողջ հեղեղները: Վժուար բան չէ բարի վարմունք ունենալը, բայց միևնոյն ժամանակ այդպիսի վարմունքների ազդեցութիւնը մեր կարճօրեայ երկրաւոր կեանքից շատ բանով առաւել ապրումէ:


Ոչ մի բարի գործ երբէք չի կորսուում բոր-
րովին: Ոչ մի բան չէ մեռնում: Չէ մեռնում մին-
չև անգամ կեանքն իսկ, որը եթէ ձգում էլ է
մի կերպարանք, այդ նորա համար է, որ միւսը ստա-
նայ: Ո՛չ բարի գործը մեռնումէ և ո՛չ բարի օրի-
նակը: Թէ՛ այն և թէ՛ միւսը յաւիտեան ապրում
են մարդկութեան մէջ: Մինչդեռ մարդու ապակա-
նացու մաշկը մոխիր է դառնում և ոչնչանում, նո-
րա գործերն իրանից յետոյ թողնում են անեղծա-
նելի կնիք և ձևակերպում են ինչպէս մտքի պատ-
կերը, այնպէս էլ և ապագայ սերունդների կամբը:
Միմիայն ներկայ ժամանակը չէ ազնիւ գործերի
գնահատողն ու չափողը, այլ ապագայ դարերն էլ
հաղորդակից պիտի լինեն մեր ուրախութեան: Մի
ամբողջ գիւղ, մի ամբողջ քաղաք, մի ամբողջ
ժողովուրդ, դաստիարակելու համար բաւական է մի
առաքինի գործ: Ներկայ ժամանակն, — ասումէ Գեօ-
տէն — կարող աստուածութիւնն է՝ Սարգու կա-
րողութիւնից տրուած լաւ բանը իւր պատուաւոր
և ազնուացնող մտքերն են, որոնք գործ զրուելիս
տարածում են իրանց պտղաբեր ազդեցութիւնը
հազարաւոր տարիների վերայ՝ անցնելով մէկ սոհ-
մից դէպի միւսը: Ինչպէս հողի մէջ ձգուած փոքր
սերմերից դուրս են գալիս լաւագոյն և գեղեցկա-
գոյն բոյսեր, այնպէս էլ խղճի բնազդական շարժու-
թիւններից և նորանցից թելադրուած պարտքի
սկզբունքից բնում են ազնիւ ընաւորութիւնների

ամենառատ հունձքեր: Ահա ինչ է ասում Ուոր-
դասուորսը սքանչելի ստանաւորների մէջ:

„Stern Gawgiver! y et thou dostwear
The Godhead's most benignant grace;
Nor knowy anyting so fair
As is the smile upon thy face;
Flowers laugh before thee on their bed's,
And fragrance in thy footing treads,
Thou dost preserve the stars fromwrong,
And the most ancient heavens arethrough
thee fresh and strong“ *)

*) «Ով անողոր օրէնսդիր, բայց միեւոյն ժամանակ դու աստուա-
ծութեան ամենամեծ ողորմութեամբ լեցուած ես և ես քո գեմբի ժրգ-
տից առաւել շքնաղ ոչինչ չգիտեմ. քեզ ժպտում են ծաղիկներն իրանց
ածուններից և անուշահոտութիւնը ծաւալվում քո հետքերով. դու տա-
լիս ես աստղերին կանոնաւոր ընթացք. քո շնորհիւ ամենահին երկինքը
մնումէ զահել և ուժեղ:»





Գինը ամենայն տեղ 35 կոպ.

1424

1555

1555200

<< Ազգային գրադարան



NL0025951

